ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
20.11.2020 թ. թիվ 192Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2019 թ. 4-րդ եռ. - 2020 թ. 3-րդ եռ.)

2020 թվականի 4-րդ եռամսյակին նախորդող մեկ տարվա ընթացքում ՀՀ-ում պահպանվել է ցածր գնաճային միջավայր, որը պայմանավորվել է ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի գործոններով: Այսպես. 2019 թ. չորրորդ և 2020 թ. առաջին եռամսյակների ընթացքում Կառավարության կողմից իրականացվել է որոշակի զսպող հարկաբյուջետային քաղաքականություն, իսկ արտաքին աշխարհից փոխանցվել են հիմնականում գնանկումային ազդեցություններ: Ցածր գնաճին նպաստել են նաև մի շարք ապրանքային շուկաներում դիտված մրցակցային դաշտի փոփոխությունները և կարճաժամկետ սպառման ապրանքների շուկայից դեպի երկարաժամկետ սպառման ապրանքների շուկա պահանջարկի կառուցվածքային տեղաշարժը: Այդ ընթացքում արձանագրվել է նաև մասնավոր սպառման համեմատաբար բարձր աճ՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական հատվածի կողմից վարկավորման դրական ազդեցությամբ:

2020 թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում առաջացել են էական գնանկումային գործոններ՝ հիմնականում ածանցվելով տարեսկզբից աշխարհում և Հայաստանում բռնկված կորոնավիրուսային համավարակից, դրա կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներից և ձևավորված վարքագծային փոփոխություններից: Ստեղծված իրավիճակում, չնայած իրականացված զգալի խթանող հարկաբյուջետային քաղաքականությանը, արձանագրվել է տնտեսական ակտիվության և համախառն պահանջարկի էական նվազում՝ հիմնականում պայմանավորված տնտեսական հեռանկարի հետ կապված մեծ անորոշությունների ներքո մասնավոր սպառման նվազման և ներդրումների հետաձգման հանգամանքներով: Գնանկումային ճնշումները չեզոքացնելու և գնաճը կանխատեսվող 3 տարվա հորիզոնում նպատակային ցուցանիշին մոտեցնելու համար ԿԲ-ն նշված ժամանակահատվածում ավելացրել է դրամավարկային խթանման չափը՝ աստիճանաբար իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ՝ 1.25 տոկոսային կետով. 2020 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ այն կազմում է 4.25%:

1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ


Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն 2019 թվականի չորրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրի կանխատեսումների, պահպանվելու էր ցածր գնաճային միջավայր՝ պայմանավորված սպասվող թույլ համախառն պահանջարկով: Վերջինս էլ իր հերթին կրելու էր այդ պահին նախանշվող զսպողական հարկաբյուջետային քաղաքականության և արտաքին աշխարհում պահպանվող ցածր գնաճային միջավայրից փոխանցվող ազդեցությունները: Միևնույն ժամանակ, ցածր գնաճի ձևավորմանը շարունակելու էին զգալի նպաստում ունենալ որոշ առաջարկի գործոններ՝ ապրանքային շուկաների մրցակցության շարունակական աճը և պահանջարկի որոշակի տեղաշարժը կարճաժամկետ սպառման ապրանքներից դեպի երկարաժամկետ սպառման ապրանքներ: Այս պայմաններում, առաջնորդվելով գնաճի աստիճանական վերականգնման նախապատվությամբ, Կենտրոնական բանկը նախատեսում էր շարունակել խթանող դրամավարկային քաղաքականության

իրականացումը: Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը կարճաժամկետ հատվածում դեռևս պետք է պահպանվեր ցածր մակարդակում, իսկ միջնաժամկետում՝ մոտենար և կայունանար նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես և ակնկալվում էր, ձևավորվել է ցածր գնաճային միջավայր, սակայն, պայմանավորված գնանկումային որոշակի նոր դրսևորումներով, 12-ամսյա գնաճը սպասվածից ավելի ցածր է եղել և շեղվել է կանխատեսված ուղեգծից ներքևի ուղղությամբ: Շեղումը պայմանավորվել է այդ ժամանակահատվածում դիտարկված ինչպես պահանջարկի, այնպես էլ առաջարկի գործոններով:

Գնաճի վրա դրանց ազդեցության առումով հաշվետու ժամանակահատվածը կարելի է բաժանել երկու մասի՝ կապված իրականացված հարկաբյուջետային քաղաքականության, մասնավոր սպառման վարքագծի և դրսևորված մի շարք առաջարկի գործոնների տարբերությունների հետ: Այսպես. 2019 թ. չորրորդ և 2020 թ. առաջին եռամսյակներում Կառավարության կողմից իրականացվել է սպասվածի համեմատությամբ առավել զսպողական հարկաբյուջետային քաղաքականություն: Այդուհանդերձ, այդ ժամանակահատվածում արձանագրվել է ներքին պահանջարկի սպասվածից բարձր աճ՝ ի հաշիվ մասնավոր սպառման բարձր աճի, ինչն էլ իր հերթին պայմանավորվել է ֆինանսական համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված սպառողական վարկերի համեմատաբար մեծածավալ ավելացմամբ: Այդ ընթացքում, սակայն, գնաճի զսպմանը նպաստել են որոշ առաջարկի գործոններ, ինչպիսիք են ներքին գների վրա արտաքին աշխարհում ձևավորված ցածր գների փոխանցվող ազդեցությունը, տնտեսության ոչ արտահանելի հատվածում ռեսուրսների օգտագործման արդյունավետության աճը և ապրանքային շուկաներում շարունակաբար ավելացող մրցակցությունը: Ելնելով դրանից՝ ԿԲ-ն վերանայել է գնաճի եռամսյակային կանխատեսումները և վերականգնման ուղեգիծը: Միաժամանակ, այդ ժամանակահատվածում ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

ՀՀ ԿԲ կանխատեսումների համաձայն՝ կարճաժամկետում կպահպանվի ցածր գնաճային միջավայր, իսկ միջնաժամկետում այն կավելանա, և կանխատեսվող հորիզոնի վերջում 12-ամսյա գնաճը կկայունանա նպատակային ցուցանիշի շուրջ



2020 թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում գնաճային զարգացումներն ածանցվել են գերազանցապես տարեսկզբից աշխարհի մի շարք երկրներում, իսկ մարտից նաև Հայաստանում բռնկված Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի առողջապահական և տնտեսական հետևանքներից: Նշված ժամանակահատվածում առողջապահական և տնտեսական ներդրված սահմանափակումների, ինչպես նաև տնտեսական հեռանկարի վերաբերյալ ձևավորված անորոշության հետևանքով դիտվել է տնտեսական ակտիվության կտրուկ անկում՝ արտահայտվելով տնտեսության բոլոր ճյուղերի ցուցանիշների էական նվազումներով: Նման իրավիճակում Կառավարությունն իրականացրել է սոցիալական և տնտեսական օժանդակությանն ուղղված զգալի խթանող հարկաբյուջետային քաղաքականություն: Սակայն, համավարակի հետևանքով կուտակված մեծ անորոշության ներքո, հասարակության մոտ ձևավորվել է մասնավոր սպառման և ներդրումների նախազգուշական վարքագիծ, ինչը գերակշռել է հարկաբյուջետային խթանմանը՝ հանգեցնելով ներքին պահանջարկի թուլացման և գնաճային ցածր միջավայրի պահպանման: Հարկ է նշել, որ եռամսյակի վերջին տնտեսության վերականգնման հեռանկարի և գնաճային զարգացումների տեսանկյունից լրացուցիչ անորոշություններ են ստեղծել սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շփման գծի ողջ երկայնքով սանձազերծած լայնամասշտաբ հարձակումը և այդ իրավիճակում ՀՀ-ում հայտարարված ռազմական դրությունը, ինչպես նաև, դրան զուգահեռ, կորոնավիրուսի համավարակի նոր ալիքի բռնկումն ու արագ տեմպերով տարածումը:

Հաշվետու ժամանակահատվածում, հաշվի առնելով պահպանվող թույլ համախառն պահանջարկի ներքո հնարավոր գնանկումային ազդեցությունները, ՀՀ ԿԲ-ն վարել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ շարունակելով նախապատվությունը տալ գնաճի աստիճանական վերականգնմանը, քանի որ, ըստ ԿԲ գնահատման, ձևավորված մակրոտնտեսական իրավիճակում ցածր գնաճը նպաստում է երկարաժամկետ գնաճային սպասումների խարսխմանը և ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության նկատմամբ հասարակության վստահության աճին: Հաշվետու մեկ տարվա ընթացքում ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը աստիճանաբար իջեցրել է ընդհանուր հաշվով 1.25 տոկոսային կետով՝ պայմանավորված համավարակի տարածման հետևանքով ձևավորված բարձր անորոշության ներքո համախառն պահանջարկի դանդաղման սպասումներով:

Միևնույն ժամանակ, արձագանքելով համավարակի պայմաններում դրամային իրացվելիության պահանջարկի էական աճին՝ ԿԲ-ն իր հիմնական գործիքի միջոցով համակարգ է ներարկել անհրաժեշտ ծավալի դրամային իրացվելիություն, ինչի արդյունքում կարճաժամկետ տոկոսադրույքները ձևավորվել են ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Հաշվետու ժամանակահատվածում ԿԲ-ն մշտապես ֆինանսական շուկային ազդակ է տվել նաև այն մասին, որ կանխատեսվող մակրոտնտեսական զարգացումների պարագայում խթանող պայմանները կպահպանվեն անհրաժեշտ երկար ժամանակահատվածում՝ միջնաժամկետում գնաճի նպատակի իրագործման համար:

2. ԳՆԱՃԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2019 թվականի չորրորդ եռամսյակին հաջորդող մեկ տարվա ընթացքում 12-ամսյա գնաճը պահպանվել է ցածր մակարդակում և ցուցաբերել որոշակի տատանողականություն՝ պայմանավորված առավելապես գյուղմթերքի գների փոփոխություններով: Մասնավորապես՝ 2019 թ. չորրորդ եռամսյակում և 2020 թ. սկզբին սեզոնային ապրանքների գների անկումը, ընդհանուր առմամբ, բացասական նպաստում է ունեցել գնաճին, ինչի արդյունքում վերջինս նվազել է՝ մարտին կազմելով տ/տ -0.1%: 2020 թ. երկրորդ եռամսյակից սկսած արձանագրվել է գնաճի որոշակի վերականգնում, ինչն արդյունք է սեզոնային գյուղմթերքի՝ հատկապես մրգի գների բարձրացման. Արդյունքում՝ սեպտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 1.4%: Միևնույն ժամանակ, բնականոն գնաճի 12-ամսյա ցուցանիշը 2020 թ. երրորդ եռամսյակում որոշակի վերականգնվել է և սեպտեմբերի դրությամբ կազմել շուրջ 1.3%, իսկ կարգավորվող ծառայությունների սակագների և սեզոնային պարենային ապրանքների աճը՝ համապատասխանաբար տ/տ 1.1% և 5.1%: Հարկ է նշել, որ 2020 թվականի սկզբին որոշ ապրանքախմբերի մաքսային դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը, ինչպես և գնահատվում էր, կազմել է շուրջ 0.2 տոկոսային կետ, իսկ «Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը շարունակում է կրել տարեսկզբին ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը:

Աղյուսակ 1

Ապրանքախմբի անվանումը	Կշիռներ	12-ամսյա գնաճ	Նպաստումը տ/տ գնաճին
Բնականոն գնաճ	**72.7**	**1.34**	**0.97**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	7.73	3.77	0.29
Միս	9.58	-3.04	-0.29
Յուղեր և ճարպեր	2.37	2.38	0.06
Շաքարավազ	0.53	6.42	0.03
Ալկոհոլային խմիչքներ	2.79	11.49	0.32
Ծխախոտային արտադրատեսակներ	1.39	6.32	0.09
Հագուստ	2.45	-2.75	-0.07
Կոշիկ	1.32	-2.75	-0.04
Դեղագործական ապրանքներ, բժշկական սարքավորանք և սարքեր	4.62	2.92	0.14
Վառելիք	5.29	-1.60	-0.08
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	0.48	-0.78	0.00
Կրթություն	3.14	2.04	0.06
Հիվանդանոցների ծառայություններ	2.66	1.37	0.04
Ամբուլատոր ծառայություն	2.37	2.84	0.07
Սեզոնային պարենային ապրանքներ	**11.47**	**5.14**	**0.59**
Ձու	1.15	-3.68	-0.04
Մրգեր	4.19	20.11	0.84
Բանջարեղեն	6.13	-6.87	-0.42
Կարգավորվող ծառայություններ	**15.88**	**1.05**	**0.17**